

## 10 ՀԱՐՑ՝ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

(հարցաշար՝ փորձագիտական եւ մասնագիտական շրջանակների համար)

1. Արդյո՞ք համայնքների խոշորացման բարեփոխումներն իսկապես օբյեկտիվ եւ օրինաչափ անհրաժեշտություն են՝ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացում ապահովելու համար: Ներկայիս համակարգն արդյո՞ք տեղերում արդյունավետ կառավարման ու տարածքների զարգացման համար բավարար հնարավորություն չի տալիս:
2. Մշակվել է խոշորացման երկու մոդել՝ «փնջային» եւ «շրջանային»: Ծանո՞թ եք փաստաթղթերին եւ առաջարկվող մոդելների առանձնահատկություններին: Որո՞նք են այս մոդելների ուժեղ եւ թույլ կողմերը: Ո՞ր տարբերակն է, Ձեր կարծիքով, առավել արդյունավետ մեր երկրի դեպքում:
3. Արդյո՞ք մշակված փաստաթղթերում նախատեսված են բավարար մեխանիզմներ՝ խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերում հավասարաչափ զարգացում ապահովելու համար: Արդյո՞ք գործընթացը ռիսկեր եւ վտանգներ չի պարունակում փոքր բնակավայրերի համար: Հաշվարկվա՞ծ են բոլոր ռիսկերը:
4. Ի՞նչ ռիսկեր կարող են լինել, որոնք կնպաստեն տեղական իշխանությունների՝ բնակչությունից օտարվելուն կամ ՏԻՄ-երի՝ մեկ վայրում կենտրոնանալու հետեւանքով բնակչության համար ծառայությունների մատուցման առումով դժվարություններ ստեղծելուն:
5. Ստեղծվա՞ծ են բավարար երաշխիքներ՝ առավել արդյունավետ, գործուն եւ կարող տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ ավագանու, ձեւավորման համար: Ի՞նչ կարծիքի եք բնակավայրերի ընդհանուր ժողովի գաղափարի, համայնքի ղեկավարի ընտրության եղանակների (ուղղակի թե անուղղակի) մասին:
6. Արդյո՞ք ներկայացված մոդելներն իրոք ստեղծում են ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ ծախսման հնարավորություններ՝ թույլ տալով ավելի շատ միջոցներ ուղղել կապիտալ ծրագրերին ու ծառայություններին, քան վարչական ծախսերին:
7. Ենթադրվում է, որ խոշորացվող համայնքներն ունենալու են նոր որակի ենթակառուցվածքներ, ինչը պահանջելու է նաեւ համապատասխան ֆինանսական ռեսուրսների առկայություն: Ի՞նչ սկզբունքներով պետք է իրականացվի ենթակառուցվածքային բաշխվածությունը:

8. Լուրջ խնդիր է նաև բնակչության վստահությունը գործընթացի նկատմամբ: Արդյո՞ք տեղական հանրաքվեների արդյունքները պետք է որոշիչ լինեն այն դեպքում, երբ Մահմանդություն մեջ վերապահում է կատարված այդ մասով:

9. Ձեր կարծիքով, որո՞նք են այն հիմնական ռիսկերը, օբյեկտիվ եւ սուբյեկտիվ, որոնք կարող են էական խոչընդոտ հանդիսանալ բարեփոխումների իրականացման համար:

10. Բարեփոխումների իրականացման ինչպիսի ժամկետներ եք առաջարկում: Ո՞ր տարերակը (փուլային, միաժամանակյա եւ այլն) կարող է առավել արդյունավետ լինել: Ինչպիսի՞ն են Ձեր առաջարկությունները հանրային իրազեկման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ: